ՀՏԴ 343.2

Իրավագիտություն

Լուսինե ՍՈՒԼԵՅՄԱՆՅԱՆ
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի հայցորդ, ասիստենտ
E-mail: lusine.prosecutor@mail.ru

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

Հոդվածի նպատակն է ուսումնասիրել մինչդատական քրեական վարույթի ընթացքում գիտատեխնիկական նորարարությունների օգտագործման հնարավորությունը, մասնավորապես <<էլեկտրոնային քրեական գործի>> ներդրման հարցը, այն երկրների օրենսդրական փորձը, որոնք քրեական վարույթի ամրագրման թղթային եղանակից անցում են կատարել էլեկտրոնայինի, համեմատել այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում էլեկտրոնային նախաքննության դրսևորումներ ամրագրող իրավական դրույթների հետ:

Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք եզրակացության առ այն, որ ներկայիս գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում օրակարգի հարց է հանդիսանում մինչդատական քրեական վարույթի ընթացքում քննչական և դատավարական այլ գործողությունների՝ էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով ամրագրելու օրենսդրական կարգի նախատեսումը, այլկերպ՝ ավանդական եղանակից անցումն <<էլեկտրոնային քրեական գործի>>:

Գործնականում նշված ինստիտուտի կիրառումն իր դրական կողմերով հանդերձ՝ առաջացնում է մի շարք հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց լուծումը բացի իրավական կարգավորումներից, առնչվում է նաև գիտատեխնիկական ոլորտին և ենթադրում է իրավապահ մարմիններում անվտանգության բարձր երաշխիքներով ապահովված միասնական էլեկտրոնային ծրագրի առկայություն, ինչպես նաև վարույթի մասնակիցների՝ համակարգչային տեխնիկային տիրապետելու որոշակի մակարդակ:

Բանալի բառեր՝ մինչդատական վարույթ, էլեկտրոնային նախաքննություն, քրեական գործերի թվայնացում, էլեկտրոնային ծրագիր, էլեկտրոնային քրեական գործ,

էլեկտրոնային դատավարական փաստաթուղթ, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն:

Л.Сулейманян

ЭЛЕКТРОННОЕ УГОЛОВНОЕ ДЕЛО

Цель данной статьи - изучить возможности использования научно-технических инноваций в досудебном уголовного производстве, в частности вопрос внедрения электронного уголовного дела, законодательный опыт стран, перешедших с бумажного уголовного производства на электронный и сравнить их с отечественным уголовно-процессуальным законодательством.

Результатом проведенного исследования является заключение о том, что необходимо законодательное закрепление правил составления следственных и иных процессуальных действий в электронном виде в ходе досудебного производства по уголовному делу. Что касается решения проблем электронного уголовного производства, то это в основном находится в научно-технической сфере и связано как с владением компьютерных навыков участниками производства, так и наличием единой электронной программы с высокими гарантиями безопасности в правоохранительных органах.

Ключевые слова: предварительное расследование, электронное расследование, цифровизация уголовных дел, электронная программа, электронное уголовное дело, электронной процессуальный документ, электронное документирование.

L.Suleymanyan

ELECTRONIC CRIMINAL CASE

The purpose of this article is to study the possibilities of using scientific and technical innovations in pre-trial criminal proceedings, in particular the issue of introducing electronic criminal case, the legislative experience of countries that have switched from paper-based criminal proceedings to electronic ones, and to compare this with domestic criminal procedural legislation.

The author concludes that it is necessary to enshrine in the law the rules of investigation and legal proceedings, draft electronic procedural documents during the pre-trial proceedings. As for solving the issues of electronic criminal proceedings, this is mainly at the level of scientific and technical spheres and is associated both with the skills of participants of proceedings in the possession of computers and technicians, as well as the presence of a single electronic program with high security guarantees in law enforcement agencies.

Key words: preliminary investigation, electronic investigation, digitalization of criminal cases, electronic program, electronic criminal case, electronic procedural document, electronic documentation.

Ակնհայտ է, որ թվայնացումը հանդիսանում է ներկա դարաշրջանի նորագույն ձեռքբերումներից մեկը, որն իր լայն կիրառությունն է ստացել նաև իրավապահ մարմինների գործունեության ասպարեզում: Ինֆորմացիայի թվայնացման դերը շարունակում է մեծ ազդեցություն ունենալ քրեական վարույթի ընթացքում ապացույցների հավաքման, ստուգման, գնահատման գործընթացում:

Պետական համակարգի տարբեր մարմիններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրման փորձերը վկայում է այն մասին, որ ընդլայնվում են դրա կիրառելիության սահմանները: Այս ուղղությամբ տեսական և գործնական մեծ առաջընթաց է գրանցվել նաև քրեական դատավարության ոլորտում, մասնավորապես՝ դատավարագետների կողմից մշակվել են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրման տարբեր հայեցակարգերի վերաբերյալ առաջարկներ, իսկ գործնականում մի շարք երկրներ լիովին կամ մասամբ անցում են կատարել վարույթի էլեկտրոնային ամրագրմանը՝ նախատեսելով նաև քննչական և դատական գործողությունները հեռավար կատարելու օրենսդրական հնարավորություններ:

Գիտնականների շրջանում լայնորեն քննարկվում է քրեական դատավարությունում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների, այդ թվում՝ <<էլեկտրոնային քրեական գործի>> օգտագործման հնարավորության հարցը: Նման նորարարությունները քննարկվել են Մ.Վ. Պալչիկովայի[1], Լ.Ն. Սիմոնովիչի[2], Օ.Վ. Տուլսկայանի[3], Ս.Վ. Զունևի և այլոց կողմից: Նրանց հետազոտություններում քննվում է ոչ միայն դատական քննության փուլում թվային տեխնոլոգիաների օգտագործման նպատակահարմարությունը, այլ նաև ընդգծվում մինչդատական վարույթում քրեական գործի նյութերի էլեկտրոնային եղանակով ամրագրման կարևորությունը: Նշվածը հնարավորություն կտա քրեական դատավարությունում լայնորեն կիրառելու ինֆորմացիոն նոր

---

[1] Տե՛ս **Пальчикова М.В.**, *Новая форма процессуальных документов как следствие информатизации суда // Информационное право. 2009. № 3.*

[2] Տե՛ս **Симанович Л.Н.**, *Использование информационных технологий при отправлении правосудия // Администратор суда. 2008. № 2.*

[3] Տե՛ս **Тульская О.В.,** *Некоторые проблемы использования электронных документов в качестве доказательств в уголовном судопроизводстве // Вестник Академии Генеральной прокуратуры РФ. 2009. № 6(14)*

տեխնոլոգիաներ, բարձրացնելու արդարադատության հրապարակայնության, թափանցիկության և օպերատիվության մակարդակը, կատարելագործելու բուն դատավարությունը՝ նվազեցնելով դրանում ձևականության տարրերը[1]:

Դժվար է չհամաձայնել Ս.Վ.Զունևի հետ, ով գտնում է, որ էլեկտրոնային քրեական գործը հանդիսանում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության զարգացման գագաթնակետը[2]:

Քրեական դատավարությունում ապացույցների հավաքման հիմնական ծավալը ապահովվում է մինչդատական վարույթի ընթացքում, որի ամրագրումը կատարվում է թղթային եղանակով, ինչն իր հերթին ծախսատար է և դատավարական ժամկետների տեսանկյունից առաջացնում է խնդիրներ:

Ողջամիտ ժամկետում մինչդատական վարույթի իրականացման հարցը մշտական քննարկման առարկա է հանդիսանում, և ողջամիտ ժամկետում դատարանի առջև կանգնելու իրավունքը հանդիսանում է մեղադրյալի հիմնարար իրավունքներից մեկը: Ի թիվս այլ հանգամանքների՝ մինչդատական վարույթի իրականացումը թվային տեխնոլոգիաների կիրառմամբ հանդիսանում է այն գործուն միջոցներից, որը կապահովի մինչդատական վարույթի իրականացումը ողջամիտ ժամկետներում՝ զարգացնելով էլեկտրոնային քրեական գործի ներդրման անհրաժեշտության հարցը:

Նշված հարցի շուրջ իրենց կարծիքն են արտահայտել Ս.Վ. Զունը և Ե.Վ. Նիկիտինը՝ հանգելով եզրակացության առ այն, որ էլեկտրոնային քրեական գործը հաջողությամբ կարող է փոխարինել ավանդական փաստաթղթաշրջանառությանը, և վերջիններս առաջարկում են դատավարական գործողություններ կատարելիս լայն ծավալով օգտագործել ամրագրման էլեկտրոնային միջոցներ՝ ձևավորելով մինչդատական վարույթի ընթացքում թվային տեխնոլոգիաների օգտագործման երկու ուղղություն՝ քրեադատավարական ապացուցման գործընթացում էլեկտրոնային տեղեկատվական ազդանշանային մոդելի կիրառություն և էլեկտրոնային գործի վարման օրենսդրական կանոնների մշակում[3]:

Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ որպես <<էլեկտրոնային քրեական գործ>> հասկացվում է թվային ինֆորմացիայի՝ քրեական գործի նյութերի պահպանման համար նախատեսված տեղեկատվական համակարգը, որն օժտված է անվտանգության բարձր

---

[1] *Տե՛ս* ***Качалова О.В., Цветков Ю.А.,*** *Электронное уголовное дело – инструмент модернизации уголовного судопроизводства // Российское правосудие. 2015. № 2. С. 101*

[2] *Տե՛ս* ***Зуев С.В.****, Электронное угаловное дело: За и против, с.6, 2018г*

[3] *Տե՛ս* ***Зуев С. В., Никитин Е. В.,*** *Информационные технологии в решениуголовно-процессуальных проблем // Всероссийский криминологический журнал. 2017. Т. 11. № 3. С. 587—595.*

մակարդակով և լիովին փոխարինում է քրեական գործի թղթային տարբերակին[1]:

Նշված պարագայում թվային ինֆորմացիայի դերում հանդես են գալիս քրեական գործի նյութերը, որոնք կարող են պահպանվել էլեկտրոնային կրիչում՝ փոխարինելով քրեական գործի թղթային տարբերակին, որը հնարավորություն է տալիս վարույթն իրականացնող մարմնին մեկ թվային կրիչում պահպանել մեկ կամ մի քանի քրեական գործի նյութեր:

Քրեական գործը էլեկտրոնային եղանակով վարելու դեպքում հնարավոր է բախվել խնդիրների՝ կապված համակարգչային տարբեր վնասակար ծրագրերի, հաքերային հարձակումների խնդրի հետ: Նշված ոլորտում համաշխարհային փորձը վկայում է այն մասին, որ առ այսօր չի մշակվել տվյալներ պահպանող այնպիսի ծրագիր, որը պաշտպանված լինի հաքերների գործողություններից: Այս տեսանկյունից կասկածի տակ է դրվում քրեական գործի ամբողջականության և պահպանության ապահովումը: Այս առումով արդիական է մինչդատական վարույթն իրականացնող և դրա օրինականության նկատմամբ հսկողություն, վերահսկողություն իրականացնող մարմինների՝ պատշաճ մակարդակով տեխնիկական հագեցվածության խնդիրը:

Վարույթն իրականացնող սուբյեկտը պետք է ապահովված լինի համապատասխան համակարգչային տեխնիկայով, որը հնարավորություն կտա քննությունը կազմակերպել և կատարել առանց խոչընդոտների՝ հաշվի առնելով համակարգչային տեխնիկայի հետ աշխատելու հետ կապված մի շարք օբյեկտիվ գործոններ:

Էլեկտրոնային քրեական գործի պարագայում առաջ է գալիս նաև գործի նյութերին ծանոթանալու խնդիրը: Մի շարք հեղինակներ առաջարկում են դատավարության մասնակիցներին դատավարական կարգավիճակ ձեռք բերելու պահից տրամադրել էլեկտրոնային քրեական գործ մուտք գործելու մուտքանուն և գաղտնաբառ, իսկ դրանք այլ անձի փոխանցելու համար սահմանել քրեական պատասխանատվություն[2]:

Խնդրի պատշաճ լուծումն ապահովելու նպատակով նախևառաջ անհրաժեշտ է մշակել կանոններ, որոնցով կսահմանվեն այն սուբյեկտների շրջանակը, ովքեր իրավասու կլինեն կազմելու էլեկտրոնային քրեական գործ, քրեական գործի փաստաթղթերը դատավարական տարբեր սուբյեկտներին

---

[1] *Տե՛ս* ***Соколов Ю.Н.,*** *«Допустимость рассмотрения материалов уголовного дела в электронной форме», Информационное право, 2017, № 1, с. 29*

[2] *Տե՛ս* ***Качалова, О. В.,*** *«Электронное уголовное дело – инструмент модернизации уголовного судопроизводства» / О. В. Качалова, Ю. А Цветков // «Российское правосудие», 2015, № 2, с. 97*

ուղարկելու և դրանք ստանալու փաստը հաստատող կարգ, որոշել քրեական գործը շահագրգիռ անձանց տրամադրելու հնարավոր միջոցները և ուղիները՝ օրենսդրորեն ամրագրելով էլեկտրոնային քրեական գործի օգտագործման հնարավորությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ հարցերը՝ մի շարք հեղինակներ գտնում են, որ սխալ է վարույթի ամրագրման, թղթային եղանակից լիովին անցում կատարել էլեկտրոնային ամրագրման և առաջարկում են քրեական գործի թվայնացման երկրորդ տարբերակ՝ քրեական գործի օրինակի ստեղծում էլեկտրոնային եղանակով[1]: Նշված դեպքում քրեական գործի էլեկտրոնային տարբերակն ուսումնասիրության համար կարճ ժամկետում կարող է տրամադրվել վերադասին, մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, ներկայացվել դատարան, փորձագիտական հաստատություն և պահանջվող այլ տեղեր:

Ներկայումս մի շարք երկրներ անցում են կատարել էլեկտրոնային քրեական դատավարության. նման համակարգ է ներդրվել ԱՄՆ-ում, Կանադայում, Գերմանիայում: Բելգիայում դեռևս 2005 թվականին ստեղծվել է էլեկտրոնային արդարադատության <<Phenix>> նախագիծը, որի շրջանակներում էլեկտրոնային փաստաթուղթ կարող է կազմվել ոստիկանության, փաստաբանի, դատավարության կողմերի և դատարանի կողմից, իսկ փաստաթղթի վավերականության հարցը լուծվում է էլեկտրոնային անձնագրի միջոցով[2]: Սաուդյան Արաբիայում ևս քրեական գործի նյութերը կազմվում են էլեկտրոնային եղանակով: Իրավապահ ոլորտում կատարված բարեփոխումներով 2011 թվականին Վրաստանն ամրագրել է քրեական գործի էլեկտրոնային ձևաչափը: Այս առումով նշանակալի փոփոխություններ են կատարվել Հարավային Կորեայում, Սինգապուրում, Էստոնիայում, Լատվիայում, Մոլդովայում, Ուկրաինայում: 2011-2012թթ. Ղազախստանում փորձարկվել է <<Էլեկտրոնային քրեական գործ>> նախագիծը[3]: Ղազախստանի գլխավոր դատախազը քրեական դատավարության օրենսդրությամբ լիազորված է իր իրավասության սահմաններում ընդունելու ՔԴՕ-ի դրույթների կիրառման վերաբերյալ նորմատիվ իրավական ակտեր, այդ թվում նաև՝ քրեական դատավարությունը էլեկտրոնային ձևով վարելու հարցերով (ՂՀ ՔԴՕ 58-րդ հոդվածի 6-րդ մաս): Ղեկավարվելով նշված հոդվածով՝ գլխավոր

---

[1] *Տե՛ս* ***Познанский, Ю. Н., «*** *Электронное уголовное дело в решении проблемы расследования уголовных дел в разумные сроки» / Ю. Н. Познанский //, « Труды Академии управления МВД России», 2015, № 1 (33), с. 42.*

[2] *http:// ec.europa.eu/idabc/servlets/Doc3443.pdf?id=32321*

[3] *http://prokuror.gov.kz/rus/novosti/stati/ cifrovizaciya-prozrachno-i-effektivno.*

դատախազը թիվ N2 առ 03.01.2018թ. հրամանով հաստատել է քրեական դատավարությունը էլեկտրոնային ձևով վարելու կարգը:

ՀՀ քննչական կոմիտեի նախագահի թիվ 44-Լ առ 30.08.2016թ. հրամանով՝ ՀՀ քննչական կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող մարմիններում և ստորաբաժանումներում ներդրվել է <<Էլեկտրոնային նախաքննություն>> ծրագիրը, որը նպատակ է հետապնդում արդյունավետ կազմակերպելու քննչական ծառայողների աշխատանքը, միասնականացնելու քննչական գործողությունների արձանագրությունների և դատավարական որոշումների ձևերը, կանխարգելելու դատավարական ժամկետների խախտումները, նախաքննության նկատմամբ ներդնելու անմիջական վերահսկողության ավտոմատացված մեխանիզմներ, իրականացնելու ավտոմատացված վիճակագրության հաշվառում և համակարգում: Ծրագիրը փորձարկելիս հաշվի է առվել նախաքննական գաղտնիք համարվող տվյալների, այդ թվում և անձանց անձնական տվյալների անվտանգության ապահովման հարցը, և բացառվել է նշված ծրագրին ընդհանուր համացանցի միջոցով միանալու հնարավորությունը: Ծրագրով աշխատող յուրաքանչյուր քննիչ և վերադաս ունի իր անձնական տիրույթը, որտեղ մուտք գործելու համար նրա կողմից լրացվում է անհատական մուտքանուն և գաղտնաբառ: Այսինքն, լուծված է նաև ներքին անվտանգության հարցը:

Նշված ծրագրի նպատակները համեմատելով Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազության կողմից նշված <<Էլեկտրոնային քրեական գործ>> ծրագրի նպատակների հետ պետք է փաստել, որ դրանք հիմնականում համընկնում են: Բացառություն է կազմում այն, որ <<Էլեկտրոնային քրեական գործ>> ծրագիրը նպատակ է հետապնդում նաև տուժողին, մեղադրյալին, պաշտպանին հնարավորություն տալ առցանց եղանակով հետևել գործի քննությանը, մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարան ներկայացված միջնորդությունների քննարկմամբ կայացված որոշումները ստանալ էլեկտրոնային եղանակով, քննության ընթացքում ներկայացնել էլեկտրոնային դիմումներ և միջնորդություններ: Այսինքն, <<Էլեկտրոնային նախաքննություն>> ծրագիրը ՀՀ քննչական կոմիտեի ներքին ցանցում գործող ծրագիր է, իսկ Ղազախստանում գործող ծրագրով նույնիսկ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին հնարավորություն է ընձեռված առցանց ուսումնասիրել քրեական գործի նյութերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական գործողությունների ընթացքը և արդյունքներն

արտացոլվում են արձանագրությունում, որը կազմվել է դատավարական գործողության ընթացքում կամ դրա ավարտից անմիջապես հետո: Արձանագրությունը գրվում է ձեռքով կամ պատրաստվում տեխնիկական միջոցների օգնությամբ (ՀՀ ՔԴՕ 29-րդ հոդված, 2-րդ մաս):

ՀՀ և ԱՀ քննչական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննչական գործողությունների վերաբերյալ արձանագրությունները, դատավարական որոշումները կազմվում են համակարգչային տեխնիկայի օգնությամբ, իսկ վերջնականորեն արտացոլվում՝ թղթային եղանակով:

Խոսելով էլեկտրոնային քրեական դատավարությունից՝ անհրաժեշտ է նշել, որ դրա իրականացումը հիմնականում կատարվում է էլեկտրոնային փաստաթղթեր կազմելու ձևով: Չնայած ո՛չ Հայաստանի Հանրապետության, ո՛չ Արցախի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրությամբ չի բացահայտվում էլեկտրոնային փաստաթղթի հասկացությունն, այնուամենայնիվ, ՀՀ-ում և ԱՀ-ում գործում է <<Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին>> օրենքը, որը կարգավորում է էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող հարաբերությունները: Նշված օրենքի իմաստով էլեկտրոնային փաստաթուղթ է համարվում այն տեղեկությունը, որը գրանցված է նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ վերջինիս տակ հասկացվում է էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է՝ ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

Այսինքն, էլեկտրոնային փաստաթղթին իրավաբանական ուժ է հաղորդվում էլեկտրոնային թվային ստորագրության միջոցով: Քննչական գործողությունների վերաբերյալ արձանագրությունների՝ էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով կազմելու դեպքում առաջացող հիմնախնդիրներից մեկն էլ պայմանավորված է վարույթի մասնակիցների մոտ էլեկտրոնային թվային ստորագրության առկայության հետ: Նշված տեսանկյունից ստորագրող անձ է համարվում այն ֆիզիկական անձը, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիր:

Այս առումով հարկ է նշել, որ Ղազախստանի Հանրապետությունն օրենսդրական մակարդակով կատարել է բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ, դրանով իսկ վարույթի էլեկտրոնային ամրագրումը դարձնելով թույլատրելի՝ սկսելով հենց էլեկտրոնային փաստաթղթի հասկացության սահմանումից: Այսպես, Ղազախստանի ՔԴՕ 7-րդ հոդվածի 15-րդ կետը բացահայտում է էլեկտրոնային փաստաթղթի բովանդակությունը՝ սահմանելով այն որպես փաստաթուղթ, որի վրա տեղեկատվությունը ներկայացված է էլեկտրոնային-թվային ձևով և հավաստված է էլեկտրոնային թվային ստորագրության միջոցով:

Նշված օրենսգրքի 5-րդ գլուխը, որով կարգավորվում է քրեական գործերով վարույթի իրականացման կարգը, <<Իրավապահ գործունեության դատավարական հիմունքների արդիականացման հարցերով Ղազախստանի Հանրապետության որոշ օրենսդրական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> առ 22.12.2017թ. օրենքով լրացվել է 42.1 հոդվածով, որի համաձայն՝ հաշվի առնելով քրեական դատավարության մասնակիցների դիրքորոշումը և տեխնիկական հնարավորությունները, քրեական դատավարություն իրականացնող անձն իրավասու է քրեական դատավարությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով, որի վերաբերյալ կայացնում է պատճառաբանված որոշում: Նման դիրքորոշում կարող է ներկայացվել մինչդատական վարույթն իրականացնող անձին, դատարանին՝ միջնորդության ձևով, որը քննարկվում է նույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարկ է նշել, որ օրենսդիրը կարգավորել է նաև այն դեպքերը, երբ անհնարինություն է առաջանում շարունակել արդեն իսկ էլեկտրոնային ձևով իրականացվող քրեական դատավարությունը՝ սահմանելով, որ նման դեպքերում պատճառաբանված որոշման հիման վրա անցում է կատարվում թղթային ձևին:

Քրեական դատավարությունն էլեկտրոնային ձևով իրականացնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել քրեական դատավարության մասնակիցների կողմից, Ղազախստանի Հանրապետության ՔԴՕ 100-րդ հոդվածով սահմանված կարգով:

Քրեական դատավարությունը թղթային ձևով իրականացնելու դեպքում մինչդատական վարույթն իրականացնող մարմինն իրավասու է դատավարական որոշումները դատախազի համաձայնեցմանը կամ հաստատմանը ներկայացնել, ինչպես նաև նույն օրենսգրքով նախատեսված դեպքերում հայտնել դատախազին ընդունված որոշումների մասին և ուղարկել դատավարական որոշումների և քրեական գործի այլ նյութերի օրինակները

էլեկտրոնային ձևով՝ բացառությամբ գաղտնիության պահպանում պահանջող փաստաթղթերի:

Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, մասնավոր մեղադրողի, տուժողի, քաղաքացիական հայցվորի և նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև ցանկացած քաղաքացու և կազմակերպության իրավունքը որպես ապացույց քրեական գործի կցման համար ներկայացնել տեղեկություններ և փաստաթղթեր ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևով կամ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով:

Գործնականում ևս մեկ խնդրահարույց՝ հանցագործության մասին էլեկտրոնային հաղորդում ներկայացնելու հարցը կարգավորվել է օրենսդրական մակարդակով: Այսպես, 2016 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությամբ հանցագործության մասին ֆիզիկական անձի հաղորդումը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային փաստաթղթի տեսքով (ՂՀ ՔԴՕ 181-րդ հոդ., 1-ին մաս):

Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսդրությունը հնարավորություն է ընձեռել նաև դատական քննության արդյունքներն ամրագրել էլեկտրոնային եղանակով: Նշված օրենսգրքի 347-րդ հոդվածը սահմանում է, որ հիմնական դատական քննության արձանագրությունն ի թիվս այլ եղանակների, կարող է կազմվել նաև էլեկտրոնային եղանակով: Դատավարության կողմերի կամ հիմնական դատական քննության ժամանակ հարցաքննված անձանց միջնորդությամբ դատարանը պարտավոր է դատական նիստի արձանագրությունը տրամադրել էլեկտրոնային փաստաթղթի տեսքով՝ նախագահողի և դատական նիստի քարտուղարի էլեկտրոնային թվային ստորագրությամբ կատարված հավաստմամբ:

Ի տարբերություն Ղազախստանի Հանրապետության՝ ՌԴ քրեական դատավարության օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացակայում է ամբողջ վարույթի ամրագրման էլեկտրոնային ձևաչափը: Սակայն առկա են էլեկտրոնային քրեական դատավարության առանձին միտումներ: Էլեկտրոնային փաստաթղթերի հետ կապված հարցերը կարգավորված են ՌԴ ՔԴՕ 6-րդ բաժնում: ՌԴ ՔԴՕ 474-րդ հոդվածի համաձայն՝ դատավարական փաստաթղթերը կարող են լրացվել տպագրական, էլեկտրոնային կամ այլ եղանակով: Տպագրական, էլեկտրոնային կամ այլ եղանակով կազմված փաստաթղթերի ձևանմուշների բացակայության դեպքում դրանք կարող են կազմվել ձեռագիր:

ՌԴ ՔԴՕ 474.1 հոդվածի համաձայն՝ միջնորդությունները, դիմումները, բողոքները կարող են դատարան ներկայացվել էլեկտրոնային փաստաթղթի

տեսքով՝ փաստաթուղթն ուղարկողի՝ ՌԴ օրենսդրությամբ սահմանված ստորագրությամբ՝ համացանցի միջոցով լրացնելով դատարանի պաշտոնական կայքում տեղադրված ձևանմուշը: Նշված փաստաթղթերին կից նյութերը նույնպես ներկայացվում են էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով: Իր հերթին դատարանն էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն կիրառում է՝ համագործակցելով դատավարության մասնակիցների հետ և միայն նման տեխնիկական հնարավորություն ունենալու դեպքում[1]:

Բացառությամբ դաշնային օրենքով պահպանվող, պետության անվտանգությանն, անչափահասի օրինական շահերին և իրավունքներին վերաբերող տեղեկություններ պարունակող, ինչպես նաև անձի սեռական ազատությանն և սեռական անձեռմխելիությանը վերաբերող գործերով կայացված դատական որոշումների, մնացած դատական ակտերը կարող են կազմվել էլեկտրոնային փաստաթղթի տեսքով, վավերացվել դատավորի էլեկտրոնային ստորագրությամբ և քրեական դատավարության մասնակցի խնդրանքով կամ համաձայնությամբ համացանցի միջոցով ուղարկվել նրան:

ՌԴ ՔԴՕ 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործության մասին հաղորդումները կարող են լինել գրավոր կամ բանավոր ձևով: Միևնույն ժամանակ, հանցագործությունից տուժած անձինք կարող են հանցագործության մասին հաղորդումը պաշտոնական կայքերի միջոցով ներկայացնել էլեկտրոնային եղանակով:

Հարկ է նշել, որ Արցախի Հանրապետությունում ևս հանցագործության մասին հաղորդումները կարող են ներկայացվել էլեկտրոնային եղանակով, որոնք գրանցվում են, եթե դրանք ուղարկվել են ոստիկանության dimum@police.nkr.am էլեկտրոնային հասցեին: Նման եղանակով հաղորդում ստանալու դեպքում հաղորդում ներկայացնողին կտրոն-ծանուցագիրն ուղարկվում է էլեկտրոնային եղանակով[2]: 2021թ. հունիսի 30 ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն այս առումով նորամուծություն է նախատեսում՝ առանձնացնելով առերևույթ հանցանքի մասին ֆիզիկական անձի անմիջական և փոստային հաղորդման տեսակներ: Փոստային հաղորդումը պետք է ունենա նամակի, էլեկտրոնային նամակի կամ

---

[1] *Տե՛ս* ***Семенцов В.А., «*** *К вопросу о перспективе цифровизации отечественного уголовного судопроизводства» // Современное уголовно-процессуальное право – уроки истории и проблемы дальнейшего реформирования : Международная науч.-практич. конф. 18–19 октября 2018 г. / редкол.: А.В. Гришин и др. Орел : ОрЮИ МВД России имени В.В. Лукьянова, 2018, С. 314*

[2] *«Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության թիվ 945-Ն որ 14.11.2019թ. որոշում, 7-րդ կետ:*

հաղորդումների այլ ընդունված ձև: Նման հաղորդումը պետք է պարունակի ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար բավարար տվյալներ, ինչպես նաև բացահայտի ֆիզիկական անձի առնչությունը հանցանքին կամ իրազեկության աղբյուրը (ՀՀ ՔԴՕ 175-րդ հոդված):

Պետք է նշել, որ նոր օրենսգրքով առանձին անդրադարձ չի կատարվում առերևույթ հանցանքի մասին ֆիզիկական անձի էլեկտրոնային նամակի պատշաճության վավերապայմաններին (օրինակ՝ էլեկտրոնային ստորագրության առկայությունը):

Ամփոփելով ՌԴ-ում քրեական դատավարության էլեկտրոնային մոդելին անցնելու միտումները՝ հարկ է նշել, որ չնայած քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսվում է ի թիվս այլ եղանակների, դատավարական փաստաթղթերը լրացնել էլեկտրոնային եղանակով, սակայն մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից էլեկտրոնային եղանակով դատավարական փաստաթղթերի կազմման հարցը կարգավորված չէ: Բացի այդ, հարց է առաջանում՝ արդյո՞ք մինչդատական վարույթի ընթացքում պաշտոնատար անձանց կողմից հնարավոր է միջնորդությունները, դիմումները, բողոքները դատարան ներկայացնել էլեկտրոնային փաստաթղթի տեսքով: Նշված հարցին անդրադարձել է ՌԴ Գերագույն դատարանը 2017թ. դեկտեմբերի 26-ի թիվ 57 որոշմամբ՝ նշելով, որ ՌԴ ՔԴՕ 470.1 հոդվածի 1-ին մասի իմաստով քրեական դատավարության մասնակիցներն իրավունք ունեն էլեկտրոնային եղանակով դատարան միջնորդություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնել քրեական գործի մինչդատական և դատական քննության ընթացքում: Նման հնարավորություն տրվում է նաև դատական ակտի կատարման հետ կապված հարցերով: Սակայն, պետք է նշել, որ մինչդատական վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց քրեական դատավարության օրենսդրությամբ նման իրավունք վերապահված չէ[1] :

Նշված հարցի կապակցությամբ իր կարծիքն է հայտնել Ե.Վ. Մարկովիչևան՝ նշելով, որ վիճահարույց է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության օգտագործման հնարավորությունը միայն դատական քննության ընթացքում նախատեսելու սահմանափակումը[2]:

---

[1] *Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 26 декабря 2017 г. N 57 г. Москва "О некоторых вопросах применения законодательства, регулирующего использование документов в электронном виде в деятельности судов общей юрисдикции и арбитражных судов, п.3".*

[2] ***Марковичева Е.В.**, «Элементы электронного правосудия в российском уголовном процессе: проблемы и перспективы», // Современное уголовно-процессуальное право России: уроки истории и проблемы дальнейшего реформирования : сб. материалов Междунар. науч.-практ. конф., 20–21 октября, 2016 г., Орел, 2016, с. 248.*

Նշվածի համատեքստում պետք է նշել, որ մինչդատական վարույթի ընթացքում ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով դատավարության մասնակիցներին էլեկտրոնային փաստաթղթի ձևով միջնորդություններ, բողոքներ, դիմումներ հետաքննիչին, քննիչին, դատախազին ներկայացնելու հնարավորություն տրված չէ: Նշվածը գործնականում առաջացնում է մի շարք խնդիրներ, որոնք արտահայտվում են՝ սկսած քրեական գործի հարուցման հարցի լուծման փուլից: Այսպես, ՀՀ ՔԴՕ 183-րդ հոդվածի 1-ին մասում (ԱՀ ՔԴՕ 194-րդ հոդված, 1-ին մաս) թվարկվում են ՀՀ քրեական օրենսգրքի այն հոդվածները, որոնցով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա: Ուսումնասիրելով ԱՀ պրակտիկան՝ հանգում ենք եզրակացության առ այն, որ որոշ դեպքերում դիմողի՝ ԱՀ-ից բացակայելու հանգամանքով պայմանավորված, խնդիր է առաջանում՝ կապված բողոք ունենալու կամ չունենալու մասով դիրքորոշում ներկայացնելու հետ: Նման դեպքերում վարույթն իրականացնող մարմնի վայրից բացակայող դիմողը իր դիրքորոշումն էլեկտրոնային փաստաթղթի տեսքով ուղարկում է համացանցի միջոցով, որը համապատասխան արձանագրությամբ կցվում է նախապատրաստվող նյութերին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով՝ օրենսդիրը էլեկտրոնային քրեական դատավարության որոշակի դրսևորումներ է ամրագրել. այսպես, 19.01.2021թ. ընդունված թիվ ՀՕ-19-Ն օրենքով օրենսգիրքը լրացվել է 24.1 գլխով, որով կարգավորվել են քննչական կամ այլ դատավարական գործողությունների կամ դատական նիստի մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից ծանուցումների հարցերը: Նշված գլխի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առաջին անգամ հնարավորություն է ստեղծվել անձի ծանուցումը կատարել նաև էլեկտրոնային ծանուցագրով (ՀՀ ՔԴՕ 174.1 հոդված), որի վերաբերյալ էլեկտրոնային հաղորդագրությունը, ինչպես նաև այն ստանալու մասին հավաստումը կցվում են քրեական գործին: Նման հնարավորություն նախատեսված է նաև ՀՀ ՔԴ նոր օրենսգրքով:

Կատարված փոփոխություններով օրենսդրական հնարավորություն է ստեղծվել մինչդատական վարույթի ընթացքում միջնորդությունները ներկայացնել էլեկտրոնային եղանակով, որի վերաբերյալ իրավական դրույթ ամրագրված է ՀՀ ՔԴՕ 282-րդ հոդվածի 3-րդ մասում, համաձայն որի՝ հետաքննության մարմինը, քննիչը միջնորդություն հարուցելու որոշման պատճենն ուղարկում է հսկող դատախազին: Դատարանի որոշմամբ կատարվող քննչական գործողություններ, դատավարական հարկադրանքի

միջոցներ կիրառելու մասին միջնորդություն հարուցելու որոշումը (պատճենը) և այն հիմնավորելու համար ներկայացվող փաստաթղթերը (պատճենները) դատարան և հսկող դատախազին կարող են ուղարկվել էլեկտրոնային եղանակով: Նշված միջնորդությունների վերաբերյալ դատարանի որոշումը կարող է քննիչին ուղարկվել էլեկտրոնային եղանակով, վարույթն իրականացնող մարմինը կարող է նույն եղանակով այն ուղարկել հսկող դատախազին (ՀՀ ՔԴՕ 283-րդ հոդված, 7-րդ մաս):

Նշված փոփոխությունները միտված են նվազեցնելու ՀՀ քննչական կոմիտեի ծանրաբեռնվածությունը, որի հետևանքով հնարավոր կլինի բարձրացնել քննիչի վարույթում քննվող քրեական գործերով քննչական գործողությունների և, ընդհանրապես, ամբողջ նախաքննության արդյունավետությունը: Գործնականում, քննիչների աշխատանքային ժամերից զգալի մասը ծախսվում է միջնորդություններ ներկայացնելու նպատակով մի քանի անգամ դատարան գնալու համար: Մասնավորապես, քննիչը մեկ անգամ ներկայանում է դատարան՝ ներկայացնելու միջնորդությունը և կից փաստաթղթերը՝ թղթային տարբերակով, երկրորդ անգամ՝ դատական նիստին մասնակցելու համար, իսկ երրորդ անգամ՝ դատարանի կողմից կայացված որոշումը վերցնելու նպատակով:

ՀՀ ՔԴՕ-ում նման լրացումներ կատարելով՝ օրենսդիրը նախ և առաջ բարձրացրել է կարևորագույն խնդիր՝ գիտատեխնիկական առաջընթացի թույլատրումը և ամրագրումն օրենքով, որը տվյալ դեպքում լուծում է որոշակի քննչական գործողությունների՝ ողջամիտ ժամկետում կատարելու հարցը, որի չկատարումը հանգեցնում կամ կարող է հանգեցնել ապացույցի կորստի:

Ըստ էության օրենսդիրն առաջին անգամ անդրադարձ է կատարել մինչդատական վարույթում թվային տեխնոլոգիաների կիրառմամբ միջնորդություններ ներկայացնելու ինստիտուտին:

Սույնի համատեքստում հարկ է անդրադառնալ պրակտիկայում առաջացող ևս մեկ խնդրի՝ կապված քրեական գործի նախաքննության ժամկետի երկարացման հարցի հետ: ՀՀ քր. դատ. օր-ի 197-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նախաքննության ժամկետը քննիչի պատճառաբանված միջնորդության հիման վրա երկարացնում է հսկող դատախազը՝ միջնորդությունը լրիվ կամ մասնակիորեն բավարարելու վերաբերյալ որոշում կայացնելով: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ քննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված միջնորդությունը քննիչը պարտավոր է ներկայացնել դատախազին՝ քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 4 օր առաջ: Նշված միջնորդության քննարկմամբ դատախազի կայացրած որոշումը քննիչին ուղարկելու ժամկետային սահմանափակում չի

նախատեսվում: Ենթադրվում է, որ նախքան քննության ժամկետի լրանալը դատախազը պարտավոր է ուղարկել կայացված որոշումը: Նույնիսկ նման ժամկետի պահպանման դեպքում չեն բացառվում այնպիսի դեպքեր, երբ կայացված որոշումը քննիչին է հասնում քննության ժամկետի ավարտից հետո: Փաստորեն, ստեղծվում է փակուղային իրավիճակ, իսկ քրեական գործի հետագա ընթացքը մնում է առկախված վիճակում:

Նշված հարցի գործնական լուծումը կարող է տրվել նման միջնորդությունները և դրանց վերաբերյալ կայացված որոշումները էլեկտրոնային եղանակով ուղարկելու վերաբերյալ համապատասխան օրենսդրական փոփոխությամբ: Նման փաստաթղթերը կարող են ուղակվել էլեկտրոնային տարբերակով՝ սքանավորված՝ առանց հավելյալ վավերապայմանների (օրինակ՝ էլեկտրոնային ստորագրություն):

Այս առումով, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրքը թույլատրում է բողոք ներկայացնել էլեկտրոնային եղանակով և 6-րդ հոդվածով սահմանված ընդհանուր հասկացությունների մեջ բողոքի հասկացությունը բացահայտվում է որպես վարութային ակտի վերաբերյալ գրավոր (թղթային կրիչով՝ ձեռագիր ստորագրությամբ, կամ էլեկտրոնային կրիչով՝ էլեկտրոնային ստորագրությամբ) անհամաձայնություն:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հարկ է նշել, որ քրեական դատավարությունում գիտատեխնիկական առաջընթացի ամրագրումը պետք է նախ ապահովվի օրենսդրական կարգավորումներով: Քրեական վարույթի էլեկտրոնային ամրագրումը հանդիսանում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության քաղաքականության հիմնարար ճյուղերից մեկը: Քրեական էլեկտրոնային վարույթն իր էությամբ կարող է ապահովել ժամանակի խնայողություն՝ նպաստելով վարույթի՝ ողջամիտ ժամկետում իրականացման, վարույթի մասնակիցների համար գործի նյութերի մատչելիության, ինչպես նաև քրեական գործերով օպերատիվ քննություն տանելու խնդիրների լուծմանը:

Քրեական գործի թվայնացումը ենթադրում է մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ վերահսկողության և հսկողության մակարդակի բարձրացում՝ բացառելով յուրաքանչյուր դեպքում քրեական գործի նյութերի տրամադրման անհարկի ձգձգումները: Նշված մարմինների կողմից նյութերը կարող են պահանջվել էլեկտրոնային հարցմամբ, տրամադրվել էլեկտրոնային թղթապանակում պահպանվող քրեական գործի նյութերի սքանավորված տարբերակով, ինչը հնարավորություն է տալիս առավել սեղմ ժամկետներում ապահովելու վարույթի մասնակիցների իրավունքների և շահերի պաշտպանություն:

Էլեկտրոնային վարույթի պարագայում նախնական քննության գաղտնիության ապահովման և քրեական գործի փաստական հանգամանքներում կեղծումներ կատարելը բացառելու հարցերը լուծելու նպատակով առաջարկվում է ստեղծել լրացուցիչ երաշխիքներ՝ քրեական պատասխանատվություն սահմանել նախաքննության կամ հետաքննության տվյալներն էլեկտրոնային եղանակով այլ անձի մատչելի դարձնելու արարքի համար, նախքան վարույթի մասնակցին էլեկտրոնային քրեական գործ մուտք գործելու հնարավորություն տալը, (մուտքանուն, գաղտնաբառ) համոզվել վերջինիս՝ համակարգչային տեխնիկային տիրապետելու հանգամանքի մեջ, իրավապահ մարմիններում ներդնել փաստաթղթերի կեղծումը, կորուստը բացառող մեկ միասնական ծրագիր և օրենքով սահմանված կարգով էլեկտրոնային ստորագրություն տրամադրել համապատասխան աշխատակիցներին:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ. Գ.Ս. Ղազինյանը: